սարաններէն նման, իրենց քրոջ համար են աղօթում։

Դիմացի հարեւանի դուռն եմ ծեծում. պատասխան չկայ։ Ուզում եմ բժիշկի հասցէ հարցնել։ Խոր քնած են։ Բախում եմ ուրիշ դռներ՝ լռութիւն։ Վերջապէս հիւանդապահուհին, քնած չէ, հիւր էլ ունի։ Գալիս նայում է ու չուտ կանչում մօտը նստած հիւրին։ Բժիշկ է։ Երախան անմիջապէս պէտք է տանիլ հիւանդանոց։ Կոկորդային գործողութիւն... կրուպ...

Ժամը երկուն է։

* * *

Առաւօտեան դէմ, հիւանդանոցի դրասենեակում ուժասպառ նստած, երեխիս ոտքերը եռացած ջուրի մէջ եմ պահում։

Գիշերը մութ փողոցների ցեխերի մէջ տապալտկելով մեր վազելը, հիւանդանոցի դուռը զարնելը։ Անկողնից դուրս եկած բժիշկը։ «Պատրաստեցէ՛ք գործողութեան սենեակը»։ Ճերմակ շապիկը ու նրա հանդիստ դէմքը։ Ու վերջին բոպէին կոնսիլիումի որոշումը։ Փողոցներ ընկած դռնէ դուռ վազել, բժիշկներ արթնացնել։ Խորհուրդը։ Մեծ սենեակի մէջ սրտատրոփ սպասել «երախաների հիւանդութեանց» մասնագէտը, որը «եթէ աքսորուած չէ» անպատճառ պիտի դայ։ Ու գալիս է, աքսորից մի երկու ժամ առաջ, «Հայաստանի վերջին քաղաքացին» բժշկելու։ Ու նորից հեռի հեռ, փողոցները ընկնել սրսկման համար դեղարաններում ինչ որ հեղուկ փնտռելու համար։ Զանգերը դղրդացնել, անձրեւի տակ դռները քարով ծեծել, խուլ, քնած ձայնով հայհոյանքներ լսել, աղաչել, պաղատել՝ փրկեցէ՛ք...

Ահա, երախան փրկուած, շունչ է առնում։ Հիւանդանոցում տեղ չկայ, եւ մեզ զետեղել են դրասենեակում։ Ցուրտ է, վառարան չկայ։ Անձրեւը պատուհանի վրայ լաց է լինում։

Մօտի մեծ սրահներից տառապանքի, ցաւի ձայներ եւ հառաչանքներ են գալիս։ Վշտի տո՛ւնը։ Մեծ սենեակներ, ուր տառապանքը ապրում է մշտապէս, կաղալով մահ գալիս, հեծում ու գլուխը պատերին զարկում։ Ճերմակ շապիկներ հագած մարդիկ եւ կանայք մեքենաբար անցնում են, իրենց ամենօրեայ գործը կատարում։ Երբ մահը բախում է ուրիշների դուռը, նրանք պաղարիւն դուռը բաց են անում եւ մեծ գրքերի մէջ արձանագրում։ Ու նոյն պաղարիւնութեամբ դիմադրում են ճակատագրի հարուածներին, զոհը զոհաբերողի ձեռքից խլում եւ ընութեան օրէնքի դէմ օրէնք հաստատում։

Մեղանից ամէն մէկը օրերի սեմին առջեւ իր ճերմակ շապիկն է հագնում եւ, մեքենաբար, ճակատագրի հանդիպումը սպասում։ Կեանքը զինում է մեզ իր ուրոյն զէնքերով, որ մենք ընդունում ենք անդգալաբար, բնազդօրէն ու մտնում «իրերի շարժման մէջը»։ Ի՞նչ կը լինէր մեր դրութիւնը, եթէ մի օր, ճերմակ շապիկը լքէինք եւ ճակատագրի առջեւ կանգնէինք դէմ առ դէմ ու հաշիւ պահանջէինք։ Դէ՛ն նետէինք սովորութեան, դաստիարակութեան եւ աւանդութեան ձրիօրէն մեզ տուած զէնքերը եւ դիմէինք մեր էութեան մէջ թաղնուած ուրիշ միջոցներին։ Լինելու մեր կամքը հաստատէինք խորը այն իրականութեան մէջ, որը բանականութիւնից բախտաւոր է հրաժարուել, յանուն միակ իմաստութեան։

* * *

Երեխայիս աչքերի մէջ կեանքը կայծկլտում է, դիշերը տեսած քառսի հիւլէի նման։ Մահի մօտից անցած աչքեր, հիմա այլեւս խոր եւ գերազոյն իմաստներով հարուստ։

Ծանր կոպերը բաց են, թարթիչները տընկլուած եւ բիբերի մէջ տենդը ճառագայթներ է դրել։ Այտերը ներս են քաշուել, շրթունքները սեղմուել են, ու ճակատը մոմի պէս դեղնել է։ Հեռուից եկած այս ճամբորդը, ի՞նչեր պիտի կարողանար պատմել, եթէ մեր աղքատիկ բառերը նրա ներքին աշխարհը աղաւաղած չլինէին։

Սեղանի առջեւ բժիշկը նստած, տետրակների մէջ ինչ որ բաներ է գրում։

— Այս սենեակը անյարմար է,— ասում է,— ցուրտ է, վառարան չկայ...

— Տուն կարո՞ղ եմ տանիլ։

— Չէ՛ չէ՛, անկարելի է տեղից շարժել, եթէ կրկնուի՝ կորաւ...

— Ո՞ր տունը,— հարցնում է երեխան։

Իսկապէս, ո՞ր տունը։

Բոլոր հայ երեխաները այդ հարցը կարող են տալ։

Ո՞ր տունը։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան